

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԳԻՐԸ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ 30-ԱՄՅԱ ԱԶԳԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՏԻԿԻՆ ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆԻՆ

Նյու Յորք

Այսօր համազգային տոն է ցնծագին: Աստուծո ողորմությամբ լրացան երեսուն տարիներ այն օրեն, երբ Հ. Բ. Ը. Միությունը իբրև նախագահ ընտրեց Ալեք Մանուկյանը՝ նախախնամության ընծան համայն հայության:

Ալեք Մանուկյանը հայու պայծառ հավատքով, բարոյական բարձր հեղինակությամբ և իրեն հատուկ գործարար տաղանդով երեսուն տարիներ շարունակ հանդիսացավ մեծ և անվուգական, իբրև բարեգործական միության տընքնաջան և իմաստուն նախագահը, իբրև բարերար հայրը մեր ժողովուրդի, իբրև հոգատար վավակը մեր Մայր Եկեղեցվո և Սուրբ Էջմիածնի, իբրև հարապատ բարեկամը մեր վերածնած հայրենիքի:

Հայ ժողովուրդի մեծանուն վավակ Ալեք Մանուկյանի կյանքին ու վաստակին բյուր օրհնություն Սուրբ Էջմիածնեն, և Մեր սրտեն բխած բարի մաղթանքներ, որ Տերը պահե պահպանե վայն քաջառողջ ևս երկար տարիներ ի գլուխ իր ազգանվեր առաքելության, ընտանեկան երջանկությամբ:

«Երանի այնոցիք որ սուրբ են սրտիւք, վի նոքա վԱստուած տեսցեն»: Ամեն:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
1 դեկտեմբեր 1984 թ.